ԴԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԱՏԹԵՈՍ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մ. Հ. ԵՐԱՆՈՍՅԱՆ

XIV դ. վերջի և XV դ. սկզբի մատենագիր Մատթեոս Ջուղայեցին ուրույն տեղ ունի հայ միջնադարյան մատենագրության մեջ ինչպես թողած հարուստ մատենագրական ժառանգությամբ, այնպես էլ սոցիալ-տնտեսական երևույթների բազմակողմանի ու խոր վերլուծությամբ։

Ջուղայեցին իր բեղմնավոր գիտա-մանկավարժական գործունեության ընթացքում անդրադարձել է նաև գիտության և հավատի փոխհարաբերության խնդրին, որը ժամանակի գիտական մտքի առաջ ծառացած կարևոր հարցերից մեկն էր։ Նրան հաջողվել է միաժամանակ պարզել գիտության և հավատի գործունեության ոլորտը։ Իր նախորդների հետևությամբ Ջուղայեցին ևս գտնում է, որ աստվածաբանության բնագավառը մտքին անհասանելի է, իր իսկ բառերով ասած՝ այն «վեր է քան զմիտս»[1] և դրան հասնելու բանալին հավատն է։ Նա գրում է. «Թէպէտ հաւատով ճանաչեմք զնա, այլ ոչ կարեմք մտաւք մերովք քննել զնա»[2]։ Պարզվում է, որ «մտօք անքննելի» ու «աչօք անտեսանելի» այդ գերզգայական աշխարհը քրիստոնեական հավատի գործունեության օբյեկտն է, որտեղ, Մ. Ջուղայեցու պատկերացմամբ, գիտական իմացությունն ու բանական ճանաչողությունն անելիք չունեն։ Արարչի գոյությանը պետք է հավատալ առանց որևէ քննության ու հետազոտության։ Ուստի, այստեղից հարց է առաջանում. եթե «իմաստութիւն ոչ հասուցանէ ի հաւատս, ապա ձրի դատիմք ընդ իմաստութեան»[3]։ Առաջադրված խնդրի պատասխանում Ջուղայեցին գրում է. «Զի յաստուած երիս իրս գոյ, նախ՝ էութիւն աստուծոյ, բ. ներածութիւն»[4]։ Այնուհետև նա նկատում է, որ վերջինս լինում է երկու տեսակ. «Մին ներգործութիւն բնութեան է ընդ որում ծնունդ է և բխումն։ Եւ երկրորդ՝ ներգործութիւն յայլ աւտարս զբնութիւն արարածոց»։ Ըստ Ջուղայեցու, այս երկրորդ «ներգործութիւնը» գիտության, իմաստության ուսումնասիրության օբյեկտն է։ «Արդ,— գրում է նա,— իմաստութիւն կարէ հասանել յերկրորդ ներգործութիւն, զի եղեալ են, իսկ անեղն էութիւն և ընդ նմին ներգործութիւն ո՛չ հասանէ իմաստութիւն... վասն որոյ և երկուցն ցանկամք և վասն այսորիկ իմաստասէրքն անմեղադրելիք են...»[5]։ Վերոնշված հարցադրման ու նրա պատասխան-լուծման գիտական կարևորությունը կայանում է նրանում, որ Ջուղայեցին, փաստորեն «ճշմարտութեան երկվութեան» տեսությամբ փորձել է ապացուցել իմաստության անհրաժեշտությունը, ցույց տալ գիտության ուսումնասիրության բնագավառը։ Նա գտնում է, որ եթե հավատն անհրաժեշտ է արարչին ճանաչելու համար, ապա իմաստությունը՝

---

1 ՀՍՍՀ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 6607, էջ 368բ։

2 Ձեռ. № 6847, էջ 273ա։

3 Ձեռ. № 2519, էջ 252բ։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

«բնութիւն արարածոց»։ Այս խնդրում Ջուղայեցին հետևողականորեն զարգացրել է իր ուսուցչի՝ Գր. Տաթևացու հայացքները։ Տաթևացին անդրադառնալով գիտության և հավատի բնագավառներին, ընդգծել է, որ «գիտության առարկան բնությունն է, նրա երևույթներն ու օրինաչափությունները, իսկ հավատը չպետք է և չի կարող խառնվել գիտության գործին։ Հավատի բնագավառը գերբնական, աստվածային, գոյացությունների ճանաչումն է»[6]։ Ջուղայեցին գիտության օբյեկտի, նրա ուսումնասիրության առարկայի պարզաբանման խնդիրը չի սահմանափակել վերոնշվածով։ Իր հետագա ուսումնասիրությունների ընթացքում նա ավելի հանգամանորեն է անդրադարձել գիտության հետազոտության բնագավառի, նրա դերի կարևորությանն ու այլ հարցերի։ Նրա տեսական գրույթներում որոշակիորեն ընդգծվել է այն առաջադիմական միտքը, որ գիտությունը, բանական իմացությունը հնարավորություն են տալիս հասկանալու բնության և հասարակության զարգացման բազմաթիվ կողմեր։ Աշխարհի ճանաչողության հարցում Ջուղայեցին մեծ դեր է հատկացնում բանականությանը։ Նա իրավացիորեն նկատում է, որ մարդիկ բնության առարկաների, իրերի ու երևույթների վերաբերյալ գիտելիքներ ձեռք են բերել բանականության միջոցով։ Բանականությունն է, որ, ըստ Ջուղայեցու, մարդուն հնարավորություն է ընձեռել թափանցելու բնական ու հասարակական երևույթների մեջ, պարզել դրանց գաղտնիքները։ Նա գրում է. «զի մարդիկ ունէին բնական իմաստ, որովք զբնութիւն արարածոց զտին և զշրջան լուսավորացգ նմանապէս և զանազան արուեստս նովին քննութեամբ իմացան և զարարիչն ամենայնի»[7]։ Այստեղ գնահատելին այն է, որ Ջուղայեցին բնական ու հասարակական երևույթների ճանաչումը համարձակորեն վերապահում է բանականությանը։ Նա այն համոզմանն է, որ մարդկային միտքը զարգանում է պրպտումների և որոնումների հարատևության ընթացքում։ Նրա ընկալմամբ՝ բանական ջանքերի ու ձգտումների շնորհիվ են հարստանում մարդկանց գիտելիքները շրջապատող աշխարհի վերաբերյալ, որի խորն ու բազմակողմանի իմացությունը հսկայական օգուտ է բերում հասարակությանը։ Ջուղայեցին գրում է. «Եւ քանզի բնական է մարդոյ զեռեալ յիմաստս, որպէս տունկ ի յաճումն։ Վասն յորոյ յո՞ր քան յարի ի բան ինչ փութացուցանէ հասանելն ընդ մին ի կատարումն, որով և իմաստունքն ճոխացան։ Եւ յայսմանէ բազում շահ դոյ ի մեզ»[8]։ Վերջին հանգամանքն էլ պայմանավորում է այն իրողությունը, որ Ջուղայեցին միջնադարում բնության ուսումնասիրության պահանջ է առաջադրում։

Հատկանշական է, որ նրա ուսմունքում բնության բովանդակության բացահայտման պահանջն ինքնանպատակ չէ։ Ջուղայեցին իրավամբ նկատում է, որ մարդիկ բնական ու հասարակական երևույթների բաղում հատկությունների և հատկանիշների վերաբերյալ ձեռք բերած գիտելիքներն օգտագործում են իրենց առօրյա գործունեության ընթացքում։ Այսպես, օրինակ, նա գրում է. «Զերկրի յատկութիւն, և զջրոյ ուսանելով ո՛չ մեղանչեմք, զի ո՛չ թէ ջանամք զնոյն ստեղծանել, այլ զստեղծեալն քննելով առ ի յաւգտաւետութիւն մեզ ուսեալ ինչ ի նոցանէ, սոյնպէս եւ տոմարն... որ է շրջան արեգական լուսնի

6 «Բանբեր մատենադարանի», հ. 6, 1962, էջ 88—89։

7 Ձեռ. № 5769, էջ 53ա։

8 Ձեռ. № 6847, էջ 263ա—բ։

և դթի։ տարույն, որով կարասցուք գիտել զշահն սոյնպէս զԴ. եղանակս և ի նոսա վարել և հնձել»[9], Ինչպես պարզվում է, Ջուղայեցին բնության ուսումնասիրության կարևորությունը, նրա անհրաժեշտությունը կապում է հասարակական արտադրական պահանջմունքների հետ, որը, հիրավի, ուշագրավ կռահում է միջնադարի պայմաններում։

Բնության օրինաչափությունների բացահայտումը նրան հետաքրքրել է ոչ սոսկ գիտելիքներ ձեռք բերելու իմաստով։ Ջուղայեցին առաջին հերթին քննում է այն հարցը, թե բնական ու հասարակական երևույթների բազում հատկությունների ու հատկանիշների վերաբերյալ ունեցած իմացությունը ինչպես է վերածվում պրակտիկայի, դրանք ինչպես են ծառայում հասարակությանը։ Ըստ նրա՝ գիտությունը ինքը «բարուք գործոց է», ուստի և նրա նվաճումները պետք է օգտագործվեն հասարակության բարօրության համար միայն։ Նա գրում է. «զի ամենայն գիտութիւն վասն բարոք գործոց է. արդ՝ եթէ ոք զիմաստութիւն ուսեալ և ի չար գործ հակի յիրաւի ո՛չ է գովելի նա, զի զի՞նչ աւգուտոյ յարեգակէ, եթե ո՛չ տացէ զլոյս իւր, կամ գանձ ի ծածկելոյ, կամ աղբեր խցելոյ»[10]։

Ջուղայեցին փորձում է գիտական միտքը դուրս բերել կրոնական ծանծաղուտից և այն մոտեցնել բնությանը։ Նա իրավացիորեն նկատում է, որ մարդու գիտելիքները անմիջապես կախված են բնությունից, նրանում տեղի ունեցող փոփոխություններից. «Ուր ո՛չ հասանէ բնութիւն, նայև անդ գիտութիւն ո՛չ հասանէ»[11],— գրում է Ջուղայեցին։ Տեսական այս պրոբլեմին նա ավելի հանգամանորեն է անդրադարձել իր «Մեկնութիւն վեցօրէից» աշխատության մեջ։ Այստեղ և այլուր նա գտնում է, որ բնության ուսումնասիրությամբ ավելի է հարստանում մարդու գիտակցությունը և ձեռք բերում շրջապատը ճանաչելու նորանոր հնարավորություններ։ Նա իրականությունը համարում է ճանաչողության ամենահիմնական օբյեկտը։ Նշված մեկնության մեջ Ջուղայեցին գրում է. «Զի յիւրաքանչիւր բնութիւն հրահալելեացն իր ինչ եղեալ է աստուած, զի ի նոցանէ ուսցուք իմաստս զանազան և նոքաւք աճեսցուք ի գիտութիւնս և ի շնորհս...»[12]։ Ասվածը համոզիչ դարձնելու նպատակով, նա նշում է ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի, անագի և զանազան թանկարժեք քարերի ու մետաղների ոչ միայն օգտակարությունը, այլև փորձում է բացահայտել դրանց բաղադրությունը[13], ընդգծում առարկաների որակական առանձնահատկությունների բնութագրման կարևորությունը, որի համար պետք է դինվել գիտությամբ. «Զի բաղում մեծամեծ բանք ուսեալք ո՛չ այնպէս ցանկամք, որպէս և վասն միոյ կորեկի գիտութեան»[14]։

Մատթեոս Ջուղայեցին հանգամանորեն քննել է նաև բնությանը ներազդելու միջոցներն ու եղանակները։ Գիտակցելով, որ նշված խնդրի լուծումը միայն կարող է իրականացվել գիտության, իմացության միջոցով, Ջուղայեցին պահանջում է նախ՝ պարզել, թե ինչ է իմաստությունը և ապա՝ բնորոշել նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում։ Նա գրում է.

---

9 Ձեռ. № 2519, էջ 129ա։
10 Նույն տեղում, էջ 87ա։
11 Ձեռ. № 6287, էջ 76բ։
12 Ձեռ. № 6847, էջ 318բ։
13 Նույն տեղում, էջ 318բ—319ա։
14 Ձեռ. № 2519, էջ 129բ։

«Նախ զիմաստութիւն գիտասցուք, եւ ապա թէ զի՞նչ է գործ իմաստութեան»։ Բայց քանի որ բազմատեսակ է «իմաստութիւն եւ հոմանուն», ապա «զամենայնսն արժան է գիտենալ մեզ»[15]։ Ջուղայեցուն հայտնի են գիտության բազմաթիվ ճյուղեր։ Ըստ նրա, նյութական աշխարհի յուրաքանչյուր կոնկրետ բնագավառը գիտական իմացության օբյեկտ է, մի առանձին ուսումնասիրության առարկա։ Արժեքավորն այն է, որ Ջուղայեցին գիտությունների բազմատեսակությունը չի գիտում բացարձակ ձևով, այլ նկատում է դրանց «հոմանուն» լինելը, ներքին միասնությունը, այն, որ գիտությունները գտնվում են սերտ կապի ու փոխազդեցության մեջ։ Այստեղից էլ անհրաժեշտաբար առաջացել է գիտությունների դասակարգման խնդիրը, որը, ինչպես հայտնի է, ենթադրում է պարզել «բազմատեսակ ու հոմանուն» գիտություններից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, նրա ուսումնասիրության առարկայի յուրահատկություններն ու խնդիրները, բացահայտել գիտելիքների ներքին կառուցվածքն ու առանձին գիտությունների միջև եղած փոխկապվածությունը։

Անդրադառնալով վերոնշված կարևորագույն պրոբլեմին, Ջուղայեցին նկատում է. «Եւ զի ամենայն իմաստասիրութիւն յերկուս բաժանի. ի տեսականն և ի գործականն...»[16]։ Այնուհետև, անցնելով դրանցից յուրաքանչյուրի բնութագրմանը որպես գործնական իմաստության բնագավառի, օրինակ, նա նշում է «բժշկութեան արուեստն», իսկ տեսականի մեջ մտցնում «գիտութիւնը և հաւատը»[17]։ Նա գիտությունները դասակարգելիս հարազատ է մնացել Դավիթ Անհաղթի տեսական սկզբունքներին։ Ինչպես հայտնի է, գիտությունների դասակարգման անհաղթյան սխեմայում, որպես գործնական իմաստության բնագավառ, ընդգծված է արհեստագործությունը՝ իր ամենատարբեր ճյուղերով։ Այսպես, օրինակ, հյուսնությունը, դարբնությունը, նկարչությունը, քանդակագործությունը, պրակտիկ բժշկությունը և այլն, որոնք, ըստ նրա, չեն պահանջում գիտական որոնումներ և առանձին դիտելիքներ, ընկալվում են մեխանիկորեն, փորձով և ունակությամբ։ Սակայն Անհաղթի պատկերացմամբ՝ «արուեստներից» յուրաքանչյուրի տեսական գրույթները մշակվում են փիլիսոփայության կողմից[18]։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Դավիթ Անհաղթը գիտական իմացության բնագավառում հսկայական տեղ է հատկացրել փիլիսոփայությանը։ Տեսական իմացությամբ զինվելու անհրաժեշտությունը Անհաղթի մոտ մղվում է առաջին պլան։ Առաջնորդվելով նշված դրույթներով Ջուղայեցին ևս առանձին կարևորություն է տալիս ուսուցմանը, դաստիարակությանը, տեսական գիտելիքներով զինվելու անհրաժեշտությանը, որը, անշուշտ, ժամանակի համար ուներ չափազանց մեծ նշանակություն։ Ըստ Ջուղայեցու, գիտելիքները լինում են տարբեր տեսակի՝ բարոյական, բնական, կրթական և այլն։ Հետաքրքիր են նրա ըմբռնումները բնական և կրթական իմացության վերաբերյալ։ Ջուղայեցու պատկերացմամբ «բնական իմաստությունը» մտքի կարողություն է, մարդու բնատուր ընդունակություն։ Նա գրում է. «առաջին իմաստութիւն է բարոյական..., երկրորդ՝ իմաստութիւն կոչի բնական հնարք մարդոյն, զոր ունին ի ծննդենէ, որպէս

15 Ձեռ. № 2229, էջ 158բ։

16 Ձեռ. № 2519, էջ 36բ։

17 Նույն տեղում։

18 С. С. Аревшатян, Формирование философской науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1973. стр. 93.

յայտ է ի տղայսն, զի խորհին խորհուրդ ինչ և գործեն գործ ի՞նչ, բայց ամենայն անկատար. զի ոչ ունին գործիք»[19]։

Բնական իմաստությունը, ըստ Ջուղայեցու, բանական հնարավորություն է, որը մարդու մոտ դրսևորվում է վաղ հասակում։ Նա նկատում է, որ երեխան կատարում է որոշ գործողություններ, սակայն դրանք գիտակցված արարքներ չեն։ Այդ գործողությունների միջոցով հնարավոր չէ հասնել բնության իրերի, առարկաների ու երևույթների էության ճիշտ ըմբռնմանը։ Ջուղայեցին դրում է, որ անսխալ ճանաչման հասնելու համար մարդու բնատուր ընդունակությունները ժամանակի ընթացքում պետք է կատարելագործվեն։ Այդ գործում հիմնական գերը պատկանում է կրթությանը, ուստի բնության ճանաչման խնդրում Ջուղայեցին կարևորությունը տալիս է «կրթական իմաստությանը»։ Նա գրում է. «իմաստութիւն կոչի կրթական, որպէս յորժամ ուսանիմք զամենայն ինչ արուեստ, զբան և զգործ, զորս տեսանեմք՝ որպէս ի ի սանմանն բացահայտի՝ մտաց և ճանաչող ընդունակ»[20]։ Մեջբերված հատվածից պարզվում է, որ ուսանելու ընթացքում դրսևորվում են անհատի ստեղծագործական ունակությունները։ Այլ կերպ՝ ուսումնառությունը միաժամանակ ստեղծագործական պրոցես է, որի ընթացքում դրսևորվում են մարդու ընդունակությունները։ Դրանք, ըստ Ջուղայեցու, ինչպիսի պայմաններում էլ դրսևորվելիս լինեն, երևույթների էության մեջ թափանցելու հատկություն են, կարողություն։ Ուստի, ընդունակությունների անընդհատ զարգացումն ու կատարելագործումը գիտական իմացության գլխավոր և անհրաժեշտ պայմանն են, քանի որ դրանով նոր հնարավորություններ կընձեռվի ավելի բազմակողմանիորեն բացահայտելու ուսումնասիրվող օբյեկտի էությունը։ Առաջնորդվելով նշված գաղափարներով՝ Ջուղայեցին իր գիտա-մանկավարժական գործունեության ընթացքում բազմիցս անդրադառնում է կրթական իմաստության դերին ու նշանակությանը, շեշտելով գիտելիքների՝ «բազում ուսուցմամբ» գոյանալու իրողությունը։

Նշված խնդիրների պարզաբանման տեսակետից հետաքրքիր է նրա հետևյալ միտքը. «Իսկ իմացումն, որ է իմաստութիւն, գ. է։ Նախ՝ բնական իմաստութիւն, որ ընդ ստեղծանելն լինի ամենայնի, երկու՝ կրթականն, զոր առնումք աշխատանօք, երեք՝ շնորհական...»[21]։ Այնուհետև Ջուղայեցին անցնում է դրանց բնութագրմանը։ Նա գրում է. «բնական իմաստութիւն ո՞չ կարէ որոշել զիսկապէս բարին, նաև զչարն, քանզի ի վեր երևոյթն հայի։ Եւ չարն բաղում յատկութիւն ունի։ Նախ՝ զի հոմանուն բարի կոչի և ոչ ունի զիրն բարի։ Երկրորդ՝ զի սկիզբն բարի է և ի կատարածն՝ չար։ Երրորդ՝ զի պաճուճեալ է բարեաւն և ի ներքոյ է չարն։ Չորրորդ՝ մարմնոյ քաղցր է և հոգոյ դառն»[22]։

Ջուղայեցու հայացքից չի վրիպել այն հանգամանքը, որ երբեմն բնական և հասարակական երևույթների ձևն ու բովանդակությունը չեն համապատասխանում։ Նա իրավացիորեն նկատում է, որ այդ երևույթներն ունեն արտաքնապես չդրսևորվող հատկություններ, և որ այդպիսիք քննելու համար պետք է թափանցել դրանց ներքին օրինաչափությունների մեջ։ Ջուղայեցին

19 Ձեռ. N 2229, էջ 158բ։
20 Նույն տեղում։
21 Ձեռ. N 6287, էջ 79ա։
22 Նույն տեղում։

միաժամանակ նկատում է, որ միայն բնատուր իմացությամբ հնարավոր չէ թափանցել բնական ու հասարակական երևույթների էության մեջ, ճանաչել դրանք։ Ըստ նրա՝ մարդկային բնատուր ընդունակությունները պետք է զարգանան, կատարելագործվեն, այսինքն՝ բնության առարկաները և երևույթները ճանաչելու համար մարդը պետք է զինված լինի տեսական որոշակի գիտելիքներով, այլ կերպ՝ «թագաւորեալ լինի ի վերայ արուեստին իւրոյ բազում ուսմամբն»[23]։

Նման հարցադրումներով Զուղայեցին փաստորեն ընդվզում է պլատոնյան բնածին գաղափարների իդեալիստական տեսության դեմ։ Տեսական այս խնդրին Զուղայեցին անդրադառնում է նաև իր մեկ այլ աշխատության մեջ։ Նա գրում է, որ ուսման միջոցով մարդիկ «Նախ կրթին զխամ միտս և զամենայն տգիտութիւն նորա ի բաց ընկենուն և ապա երեքին գիտութեամբ, որ է մարգարեական և առաքելական, և իմաստասիրական գիտությամբ շարմանայ, ամրանայ և ապա կարի գործս գործել...»[24]։ Այստեղ արժեքավոր է այն, որ, ըստ Զուղայեցու, մարդու «խամ» միտքը զարգացնելու և կատարելագործելու համար անհրաժեշտ է նաև իմաստասիրությունը։

Գիտությունները դասակարգելիս Զուղայեցին գրում է. «Իմաստութիւն կառավարութիւն քաղաքաց և տանց և գեղից, որպես թագաւորք, իշխանք և տանուտերք և այլք»[25]։ Իր ուսուցչի՝ Գրիգոր Տաթևացու, նման նա ևս մարդու անձնական ու հասարակական տնտեսության կառավարումը համարում է գիտության առանձին ճյուղ։ Նույն միտքը Զուղայեցու մոտ ձևակերպվել է. «աշտարակ շինելն արուեստ է, իսկ շէն պահելն՝ իմաստութեան գործ»[26]։

Պատահական չէ, որ Զուղայեցին ավեր ու անկարդ է համարում այն «շէնն, որ ո՛չ ունի ձեռնաւոր և տանուտէր...» կամ «թէ իցէ ձեռնաւոր և տանուտէր, և ոչ սերմանեալ աշունն և գարունն...»[27]։ Նա առանձնահատուկ տեղ է հատկացնում մարդկանց տնտեսական-արտադրական գործունեությանը։ Ըստ Զուղայեցու, նյութական բարիքների արտադրությունը, դրա կատարելագործումն ու զարգացումը, տնտեսական կյանքի կարգավորումը, «շէնի» գոյության անհրաժեշտ պայմանն են։ Եվ ահա հասարակության տնտեսական այդ գործունեությունն է, որ Զուղայեցին իրավացիորեն համարում է գիտության առանձին ճյուղ, հետազոտության հատուկ բնագավառ։

Զուղայեցու պատկերացմամբ, գիտությունների աղբյուրը օբյեկտիվ իրականությունն է, բնության իրերը, առարկաներն ու երևույթները։ Այլ կերպ՝ նա գիտությունները դասդասելիս հիմք է ընդունում դրանց՝ մարդուն ծառայելու եղանակը, վերջինիս ուսումնասիրության բնագավառն ու խնդիրները, որը, անշուշտ, գիտական որոշակի առաջընթաց էր։ Նա նկատում է, որ մարդը իր բազմապիսի կարիքներին համապատասխան էլ ստեղծել է արտադրության տարբեր ճյուղեր, որոնց միջոցով բնության առարկաները մշակում և դարձնում է պիտանի։ Ահա այս ստեղծագործական ունակությունների շնորհիվ է, որ մարդը Զուղայեցու պատկերացմամբ արարիչ է. «Գիտեալ է, զի մարդս գործ է ձեռինն աստուծոյ և ոչ թէ ոչ ինչ է անկար, այլ էութիւն իմն նման

23 Ձեռ. № 2519, էջ 36ա։
24 Նույն տեղում, էջ 86բ։
25 Ձեռ. № 2229, էջ 159ա։
26 Ձեռ. № 2519, էջ 34բ։
27 Նույն տեղում, էջ 150բ։

արարչին կարող զորութեամբ և անձնիշխանութեամբ, որով կարողանայ բաղում բարիս և չար յառաջ բերել»[28]։ Մարդը արարիչ է առաջին հերթին իր գոյամիջոցներն արտադրելու տեսակետից, թեև այս հարցում հսկայական տեղ է հատկացվում բնությանը։ Ջուղայեցու ըմբռնմամբ՝ արարիչը, բնությունը և մարդիկ ստեղծագործող են, սակայն տարբեր ձևերով ու մեթոդներով։ Նա գրում է. «զի երեք են արարիչ ըստ փիլիսոփային, աստուած և բնութիւն և արուեստն։ Աստուած յոչ էից. գոյացուցանէ եւ բնութիւն ի սակաւ հիւթոյ սերմանն, իսկ արուեստն ի բաղում նիւթոցն, որպէս հիւսն և ոստայնանկն...»[29]։

Մատթեոս Ջուղայեցին բաղմիցս անդրադառնում է նյութական արտադրությանը, նրա պարզ տարրերի բնութագրմանը։ Նա նշում է, որ «գործոյն ի մարմնական ի բաղում ինչ պիտոյանայ, որով գործն ի կատարումն ելցէ։ Նախ՝ ուժ ընդունակ և կարող այրն, որպեսզի կարասցէ զծանրութիւնս շարժել և ոյցանկութիւն կամացն լցուցանել։ ...Դարձեալ պիտոյանայ ճարտար միտք արուեստաւորին, որպեսզի զնիւթքն զայնոսիկ զիւրաքանչիւր պատշաճն ի գէպ իւր ի գործածցէ՝ որպէս միտք ներկողին, զի գիտէ բաժանել զամենայն ներկսն ի ձեռն նիւթոցն»[30]։ Դատելով այս բացատրությունից՝ արտադրությունը պայմանավորող առաջին անհրաժեշտությունը աշխատուժի առկայությունն է, աշխատանքի առարկաների ու գործիքների ներդրմամբ։ Վերոբերյալ հատվածի շարունակության մեջ Ջուղայեցին գրում է. «Դարձեալ պիտոյ է նիւթ պատրաստական, որպէս ոստայնանկն ոչ կարէ առանց մանածի զարուեստ իւր տնօրինել, սոյնպէս և հիւսն և դարբինն, զի հարկաւոր են գործոց իւրեանց։ Դարձեալ պիտոյանայ և գործիք արուեստաւորին, որով և զնիւթքն յառաջեալ գործիցէ՝ որպես ուրաքն և տապար հիւսանն և կռան դարբինն»[31]։ Իրականում Ջուղայեցու մոտ ունենք նյութական բարիքների արտադրության պրոցեսն սկսելու անհրաժեշտ և գլխավոր տարրերի բնութագրում։

Գիտության հարցերի քննարկման ընթացքում Ջուղայեցու առաջ կանգնած է եղել նաև տեսական և գործնական գիտելիքների փոխհարաբերության պրոբլեմը։ Այն հարցին «թէ լսելիքն օրինացն արդարացուցանէ» թե «առնելիքն», Ջուղայեցին պատասխանում է. «պարտ է իմանալ, զի ամենայն իրաց չափող ժամանակաց գործոց մտաց տեսութիւն է և կամքն յարդարիչ է սոցա. վասն որոյ պարտ է զմիտսն հնազանդեցուցանել. նախ՝ ի ձեռն որոյ գործի ամենայն ինչ և զայս ուսանելն առնէ։ Եւ դարձեալ զի ուսանելն առաջին է և գործելն երկրորդ և ամենայն իրօք առաջինն պատուական է, քան զերկրորդն։ Եւ դարձեալ առանց գիտութեան գործն սղալ գտան բազում անգամ. եւ դարձեալ զի նախ տեսական և ապա գործնական և յայսմ ամենայնէ յայտ է թէ ուսանելն առաջինն է և պատուական, քան զգործն...»[32]։

Ճիշտ է, տեսականի և գործնականի փոխհարաբերության խնդրին անդրադառնալիս Ջուղայեցին առաջնությունը տալիս է տեսականին, սակայն միաժամանակ նկատում է, որ մտածողությունը երբեք չի կարող իմացության ճշմարտության չափանիշ լինել. «Թէպէտ զուսանելն առաջին ասասցուք, բայց գործն ցուցանէ զուսումն. զի առանց գործոց ոչ ինչ են, զոր աւրինակ՝ արուես-

28 Նույն տեղում, էջ 198ա։
29 Նույն տեղում, էջ 185բ։
30 Ձեռ. № 6847, էջ 336բ—337ա։
31 Նույն տեղում։
32 Ձեռ. № 2519, էջ 22ա։

տաւոբ ինչ յորժամ զարուեստն գործէ, յայնժամ շահի նմանէ, քան թէ ի մտին ունիցի. սոյնպէս և ամենայն ուսումն գիտութեան և առաքինութեան. թէ զործէ՝ ապա առնու զշահ աշխատանաց ուսմանն, իսկ եթե ո՛չ առնէ ո՛չ ունի ինչ վարձ, նա թեև տանջանս մեծ առնու գիտողն և ոչ առնողն, որպէս ասէ ծառայն, որ գիտէ զկամս տեառն և ոչ պատրաստեսցէ առցէ գան բազում։ Ուստի յայտ է, թէ առնելիք աւրինացն արդարացուցին և ոչ լսելիքն»[33]։ Այստեղ Ջուղայեցին այն միտքն է առաջ քաշում, որ իմացության չափանիշ կարող են լինել մարդկային գործունեությունը, պրակտիկան։

Մատթեոս Ջուղայեցին ժամանակակիցներին անընդհատ խրախուսել է սիրել գիտությունը, լուսավորությունը և դրանով սատարել ազգային մշակույթի առաջընթացը։ Նա նկատում է, որ գիտությունը, իմաստությունը հասարակության զարգացման կարևոր նախադրյալներից են։ Ջուղայեցու պատկերավոր համեմատությամբ՝ ինչպես արգավանդ դաշտն է բազմապիսի բարիքներ տալիս, այնպես էլ հանճարեղը, իմաստունը, կրթություն և դաստիարակություն ստացած մարդը ընդունակ է բացելու բնությունն ու հասարակությունը ճանաչելու նոր հնարավորություններ։ Նա գրում է. «...դաշտք նշանակեն զգիտունս և զհանճարեղս, որք և նման դաշտի զանազան իմաստս յառաջ բերեն»[34]։

Այդուհանդերձ՝ նա միաժամանակ մատնանշում է այն բոլոր դժվարությունները, որոնք ընկած են գիտության զարգացման ճանապարհին։ Այս առումով ուշագրավ է նրա հետևյալ բացատրությունը. «Ուղևորք ի ճանապարհս ընթանան բազում հակառակութիւն դիպի նոցա. արգելք ճանապարհի. նախ՝ յորդախաղաց գետք, երկրորդ՝ լայնատարած ծովք, երրորդ՝ բարձրութիւն լերանց, որ աշխատանօք ընթացուի, չորրորդ՝ նեղ և անձուկ ճանապարհս քարանձաւաց...»[35]։ Նույնպես էլ գիտության գաղտնիքները բացահայտելու համար պետք են համառ կամք և անխոնջ աշխատասիրություն, որովհետև. «եւ է, որ բարձր է իմաստութիւն գրոցն, որպէս լեառն և առանց աշխատանաց առաքինութեան ո՛չ կարէ հասանել ի նա»[36]։

Ըստ ամենայնի գնահատելով ուսման և լուսավորության անհրաժեշտությունը, Ջուղայեցին ամենայն խստությամբ պահանջում է ուսուցանողից «գիտուն լինել, զի զոր այլոց քարոզէ զինքն ուսեալ լինի և թէ ոչ ինքն զինքն նախատէ... զոր օրինակ՝ տգէտ բժիշկ ոչ կարէ զվերս մարմնոյ առողջացուցանել, սոյնպէս և հոգևոր բժիշկն եթէ ոչ է գիտուն ոչ կարէ ապրեցուցանել զհոգիսն»[37]։ Նա միաժամանակ անարգանքի սյունին է գամում բոլոր նրանց, ովքեր, չնայած գիտուն են, սակայն դիտելիքները չեն ավանդում իրենց սաներին։ Նա գրում է. «զի գիտութիւն կորեալ է յայն, որ խնայէ, որպես ասէ Սիրաք, իմաստութիւն ծածկեալ և գանձ աներևույթ, զինչ օգուտ են երկոքեանն։ Լավ է անիմաստն, որ ծածկէ զտգիտութիւն իւր, քան զայն, որ իմաստուն է և ծածկէ զգիտութիւն, առաւել չար է, քան զագահն, զի զգանձն նորա յետմահուանն այլ յափշտակեն, իսկ գիտութիւն մարդոյ, որ ոչ բաշխէ ի կենդանութեան իւրում և յետ մահուանն անհնար է յայլ անկանել»[38]։

---

33 Նույն տեղում, էջ 22ա—բ։
34 Ձեռ. № 6847, էջ 307ա։
35 Ձեռ. № 6287, էջ 84բ։
36 Նույն տեղում։
37 Ձեռ. № 6607, էջ 427բ։
38 Նույն տեղում, էջ 426ա։

Ջուղայեցին բարձր է գնահատում իմաստությունը. «Զի սա է անկողոպտելի գանձ, որոյ ոչ ամուրք պիտոյ են և ոչ փախուստ ի թշնամեաց, ոչ անօք ոսկեղէնք և արծաթեղէնք և ոչ ծառայք, ոչ երկնչի ի բռնաւորաց...»[39]։

Ուշագրավ է նրա այն պնդումը, թե իմաստությունը մեկ ազգի սեփականություն չի կարող լինել, այլ «կարէ խօսիլ» ամեն ազգի լեզվով՝ «ամենայն ազգաց հնար է մերձավորիլ»։ Քանի որ «բարի յիշատակ է մարդոյ առաւել քան զհապար դաւակ, զի թէ լինի բաղում ազգ որդի ուրուք ոչ կարէ սփռիլ յամենայն ազգ, իսկ իմաստութիւն յամենայն լեզուէ կարէ խօսիլ և ամենայն ազգաց հնարէ մերձաւորիլ, ապա գեղեցիկ է իմաստութիւն»[40]։

Ճանաչողության գիտական բացահայտումը, ըստ Ջուղայեցու, սկսվում է զգայությունից, որը առաջանում է մարդու զգայարանների վրա արտաքին աշխարհի ներգործությունից։ Նա բազմիցս անդրադարձել է զգայարանների դերին ու նշանակությանը և ընդգծել դրանց բացառիկ կարևորությունը արտաքին աշխարհի ճանաչման գործում։ Զուգահեռ անցկացնելով մարդու, բնության և բնակավայրի (քաղաքի) միջև, Ջուղայեցին գրում է. «զի սպասաւորք կարգեալ են ի քաղաքի բերել ի նա զամենայն ինչ. նմանապէս է ի մարդկան կարգեալ է աչքն ծառայէ, զի տեսանիցէ և ի ներքս ի միտքն տանի զկերպարն, զի ճանաչիցէ և ձեռն զի գործեսցէ զճաշակելիքն, զի մանրեսցէ և հոտոտելիքն և այլն»[41]։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ Ջուղայեցու իմացության տեսությունը չի մնում զգայական ընկալման աստիճանում։ Նա իրավացիորեն նկատում է, որ բնության իրերի ու առարկաների էության մասին գիտելիքներ ձեռք բերելու համար մարդու զգայարանների հետ միասին անհրաժեշտ է նաև բանականություն, որովհետև «զայլոց տեսանէ աչքն և ինքն անգիտանա»[42]։

Զգայարանները բանականության գործիքներն են, քանզի, «ի ձեռն աչացն տեսանեմք, ականջօք լսեմք, ըռնկամք հոտոտեմք, բերանով ճաշակեմք և ձեռօք շօշափեմք և բանիւ խօսիմք ընդ միմեանս և խորհրդով իմանամք զհանդերձեալն և խորհիմք վասն վաղուի...»[43]։ Ընդգծելով զգայարանների դերը, Ջուղայեցին միաժամանակ ընդգծում է մարդու խոսելու և խորհելու ունակությամբ օժտված լինելու կարևոր պարագան։ Իսկ դա ամենամեծ բարեմասնությունն է, որով նա տարբերվում է կենդանական աշխարհից։ «...զի լուսաւորքն նշանակեն զբանականութիւն մտաց մարդկան, զի որպէս լոյս ոչ չափի, սոյնպէս և բանականութիւն ոչ ի գիր անգանի և նա է բաժանարարն ի յայլ կենդանեաց...»[44]։ Նշանակում է, Ջուղայեցու մոտ մարդկային ճանաչողությունը կանգ չի առնում միայն տեսնելու, զգալու, շոշափելու և հոտոտելու զգայական աստիճանի վրա, այլ, ըստ նրա, ճանաչողության գործում վճռականը բանականությունն է, խորհելու և մտածելու ունակությունը։ Նա գտնում է, որ արտաքին աշխարհի վերաբերյալ զգայարանների ստացած տվյալները «թափանցաբար» անցնում են մտքին, որտեղ մշակվելուց հետո

39 Ձեռ. № 6847, էջ 268բ։
40 Ձեռ. № 2229, էջ 262բ։
41 Ձեռ. № 2519, էջ 58բ։
42 Ձեռ. № 6607, էջ 120ա։
43 Նույն տեղում, էջ 130ա։
44 Ձեռ. № 6847, էջ 325ա—բ։

նոր միայն հասնում ճանաչողությանը։ «Հուր ասէ զհոգին բանական, ոչ վասն այրեցողութեան, այլ վասն բնութեան և թափանցութեան, զի որպէս հուրն անտեսանելի է, առանց նիւթոյ, վասն զի նուրբ է և պարզ էութիւն, սոյնպէս և հոգին անմարմին էութիւն է և որպէս հուրն թափանցաբար ըմբռնէ զնիւթն, այսինքն զերկաթ կամ զփայտ, բոլորն է ի բոլոր նիւթն և բոլորն իւրաքանչիւր մասն մարմնոյն»[45]։

Այնուհետև Ջուղայեցին իրավացիորեն նկատել է, որ գիտական իմացության համար հսկայական գեր ունեն նաև անունները, հասկացությունները։ Իր աշխատություններից մեկում նա գրում է. «առանց անուան ոչ գայ ի գիտութիւն», այստեղից էլ հանգում է այն եզրակացության, թե «ստեղծուածոյն» անհրաժեշտ է «նախ էութիւն, զի առանց էութեան ոչ ինչն ասի, բ. որակն հարկաւոր ի գոյ ստեղծուածոյն, դ. ձևք պիտոյանան գոյին, զի ամենայն ինչ եռակի տարորոշք են, դ. առ ինչք պիտոյանան ամենայնի... հինգերորդ՝ անունն ի վերայ ամենայնի...»[46]։ Վերջինիս կարևորությունը նրանում է, որ այն, «յայտնէ զբնութիւն իրին և տրոհէ միմեանց»[47]։ Այլ կերպ, անունների միջոցով մարդիկ տարբերում են բնության և հասարակության բազմաթիվ կողմեր, հարաբերություններ, հատկություններ ու հատկանիշներ։ Ջուղայեցին հետևելով տաթևյան դպրոցի առաջադիմական սկզբունքներին, բառ հասկացությունները համարում է օբյեկտիվ գոյություն ունեցող իրերի ու առարկաների պայմանական նշաններ և միաժամանակ գտնում, որ եթե փոխվում է դրանց դրսևորման ձևը, ապա համապատասխան փոփոխություն է տեղի ունենում նաև հասկացությունների մեջ։ Նա գրում է. «զի իւրաքանչիւր իր յառաւել պիտանութենէն ընդունի զանունակոչութիւն»[48]։

Վկայակոչված դրույթներից պարզվում է, որ նյութով է պայմանավորված անունների, հասկացությունների գոյությունը։ Սա արդեն նոմինալիստական առաջադիմական տեսակետ է, որի համաձայն գաղափարները, հասկացությունները երկրորդային են և արտացոլում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրերի ու առարկաների էական հատկություններն ու հատկանիշներն ամբողջությամբ։ Նման գիտական դատողություններով, փաստորեն, Ջուղայեցին դեմ է դուրս գալիս հասկացությունների գաղափարների առաջնության իդեալիստական տեսությանը։

Այսպիսով, XIV դ. վերջի և XV դ. սկզբի մատենագիր Մատթեոս Ջուղայեցին ցույց է տվել, որ գիտության ուսումնասիրության բնագավառը օբյեկտիվ իրականությունն է, որը քննելի է բանական իմացությամբ։ Հիմքում ունենալով Դավիթ Անհաղթի առաջադիմական դրույթներն ու սկզբունքները, նա ավելի հանգամանորեն է անդրադառնում գիտական իմացության մեթոդոլոգիական խնդիրներին։ Ջուղայեցին գտնում է, որ ուսումնասիրվող օբյեկտը ճիշտ հասկանալու, նրա էությունը գիտականորեն բացահայտելու համար ամենից առաջ հարկավոր է ուսման միջոցով ձեռք բերել տեսական որոշակի գիտելիքներ։ Նրա ընկալմամբ՝ գիտական պատկերացումը ընդլայնում է մարդու իմացական հնարավորությունները, կատարելագործում բանական

45 Ձեռ. № 6607, էջ 212բ։
46 Ձեռ. № 2519. էջ 232բ։
47 Նույն տեղում, էջ 236ա։
48 Ձեռ. № 5871. էջ 39ա։

ու մտածողական կարողությունները։ Ջուղայեցին միանգամայն իրավացիորեն նկատել է, որ «կրթական իմաստությունը» հնարավորություն է ընձեռում մարդուն անսխալ ճանաչել բնության և հասարակության զարգացման բազմաթիվ կողմեր, հատկություններ ու հատկանիշներ։ Միաժամանակ, նա կարողացել է ցույց տալ, որ մարդու անձնական և հասարակական տնտեսության կառավարումը, հասարակության տնտեսական կյանքի կարգավորումը իմաստության առանձին ճյուղ, հետազոտության հատուկ բնագավառ է։

Խոսելով հասկացությունների, գաղափարների մասին, Ջուղայեցին կանգնում է արիստոտելյան ուսմունքի պաշտպանության դիրքերում, ելնելով տեսական այն սկզբունքից, որ անունները, գաղափարները ունեն նյութական օբյեկտ, հանդիսանում են այդ օբյեկտի ընդհանրացման արդյունք և երկրորդային են դրանց նկատմամբ։ Նա միաժամանակ ցույց է տալիս, որ գիտելիքների գաղափարների ճշմարտությունը պետք է գտնել մարդկային փորձի և գործունեության մեջ։ Այսօրինակ հարցադրում-լուծումներով Ջուղայեցին իր տեղն ունի հայ միջնադարյան տեսական մտքի զարգացման գործում։

ВОПРОСЫ НАУКИ В ТРУДАХ МАТЕОСА ДЖУГАЕЦИ

М. А. ЕРАНОСЯН

Резюме

Матеос Джугаеци занимает видное место в средневековой армянской историографии. Его перу принадлежат ценные исследования как по вопросам науки, так и многим социально-экономическим проблемам.

Согласно Джугаеци, предметом исследования науки является объективная действительность, которую можно распознать разумом. Джугаеци считал, что для научного обоснования изучаемого объекта необходимо прежде всего приобрести определенный багаж теоретических знаний.